

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի 2016 թվականի մարտի 26–ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. Ուսումնական գործընթացը բնագիտական ֆակուլտետում:
2. 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի լուծարքի արդյունքների ամփոփումը և ֆակուլտետի կողմից քայլերի ձեռնարկում ուսման առաջադիմության բարձրացման գործում:
3. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի 11 անդամներ:

Լսեցին – 2015-2016 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի վերաբերյալ /զեկուցող՝ Մ. Պ. Ավագյան/:

Նշվեց, որ ֆակուլտետում դասերն ընթանում են դասացուցակին համապատասխան, ավարտին են մոտենում ավարտական կուրսերի միջանկյալ քննությունները և արդեն մեկնարկել է քննաշրջանը: Բակալավրիատի 1-ից 3-րդ կուրսերում մեկնարկել են առաջին միջանկյալ քննությունները՝ նախապես կազմված ժամանակացույցի համաձայն: Ամբիոններում աշխատանքներ են տարվում ավարտական կուրսերին առնչվող փաստաթղթերի ամբողջականացման և պատրաստման ուղղությամբ:

Որոշեցին – 1. Ավարտական կուրսերին վերաբերող փաստաթղթերը պատրաստել ռեկտորատի կողմից սահմանված ժամանակացույցին համապատասխան:

2. Ամբիոնների կողմից նախապատրաստել և անցկացնել ուսանողական գիտաժողովներ:

Լսեցին – 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի լուծարքի արդյունքների ամփոփման և ուսման առաջադիմության բարձրացման գործում ֆակուլտետի կողմից քայլերի ձեռնարկման վերաբերյալ /զեկուցող՝ Մ. Պ. Ավագյան/:

Որոշեցին – Առավել հետևողական լինել ուսման ցածր առաջադիմություն ունեցող ուսանողների նկատմամբ, նրանց հետ կատարել անհատական աշխատանք՝ ներգրավելով դասախոսներին և ամբիոնների խորհրդատուներին, հնարավորինս նվազեցնելով ակադեմիական պարտք ունեցող ուսանողների թիվը բնագիտական ֆակուլտետում:

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Մ. Պ. Ավագյան

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Մ. Հ. Հովհաննիսյան